Ակադեմիան և սուրճի սեղանը. Կանայք և սուրճը հանրայինի և մասնավորի աշխարհներում

Արփինե Ղամբարյան



Ներածություն 3
Հետազոտական հարցադրումները 4
Դիրքայնություն 4
Ֆեմինիստական իմացաբանություն 5
Ծիրկեթները և սուրձխմությունները. համեմատական հայացք 7
Դաշտային աշխատանք. հասանելիություն համայնքներին 8
Վանաձոր, Լոռի. հուլիսի 8, 2023 9
Բազում, Լոռի. հուլիսի 9, 2023 11
Ջրառատ, Ծիրակ. օգոստոսի 13, 2023 13
Դեբետ, Լոռի. օգոստոսի 27, 2023 16
Ծիլքար, Արագածոտն. Սեպտեմբերի 9, 2023 19
Վերջաբան 22

Ներածություն

Այս հետազոտությունը դիտարկեք իմ՝ որպես ֆեմինիստ հետազոտողի օրագիր. մի տարածք, որտեղ միահյուսվում են ակադեմիան և առօրյան, անձնականը և հանրայինը, փիլիսոփայականը և հոգեբանականը, բերկրանքն ու վիշտը:

2022 թվականին համալսարանում «Հետազոտություններ գենդերային ուսումնասիրություններում» դասի շրջանակներում կատարել եմ հետազոտական աշխատանք, որտեղ ուսումնասիրել եմ Երևանում և Վանաձորում կանանց սուրճ խմելու ավանդույթները: Հետազոտությանս հիմնական մասը առնչվում էր սուրճխմությանը (սրճելուն) որպես կանանց համար միասնական ու ապահով տարածքի ստեղծմանը: Հենվելով թեմայի վերաբերյալ որոշ գրականության քննարկման վրա՝ հետազոտությունս անդրադառնում է հանրային և մասնավոր միջավայրում սրճելու ավանդույթի ընթացքում բամբասանքային դինամիկային: Հետազոտությանս մեջ նաև քննարկել եմ ավելի վաղ պարտաստածս երկու ֆիլմերը, որոնք վիզուալ հիմք են ծառայել ստեղծագործական մոտեցումներով ցույց տալու ավանդույթի նշանակությունը կանանց համար: Ֆիլմերից մեկը նկարահանել եմ Վանաձորի Ջունգլիներ թաղամասում՝ ցույց տալով տատիկիս և իր ընկերուհու ամենօրյա սրճելու ավանդույթը, մյուսը՝ Երևանի Չարբախ թաղամասի կանանց բակային սուրճի ավանդույթը:

Սույն հետազոտությունը միտված է ավելի խորությամբ ուսումնասիրելու կանանց սուրճխմության տարածքների ֆունկցիոնալությունը և նրանց նշանակությունը կանանց տարբեր համայնքների համար:

Հետազոտությանս առաջին մասում քննարկում եմ դիրքայնությունս: Վերջինս կարևոր հիմնաքար է՝ հասկանալու համար, թե որտեղից եմ գալիս և ինչ մեթոդներով և որ մեթոդոլոգիական փիլիսոփայությամբ եմ ոտք դնում այս հետազոտության մեջ: Այն նաև հիմք է ծառայում գաղափար կազմելու սուրճխմության մշակույթի հետ իմ կապվածության մասին:

Հետազոտության երկրորդ մասում անդրադառնում եմ տեսություններին: Այն ներառում է ինքնուսուցման, ապագաղութացման, պատումի քննման և այլ ֆեմինիստական հասկացությունների գրականության հակիրճ ծանոթացում և վերլուծություն: Վերջինս իմացաբանական և փիլիսոփայական հիմնաքար է կառուցում հետազոտությանս համար՝ ընթերցողին տալով ամբողջական պատկերացում հանրային ու մասնավոր աշխարհներում կանանց գոյության մասին:

Երրորդ մասում կարող եք գտնել դաշտային աշխատանքիս մասին հակիրճ անդրադարձ, որին հաջորդում են պատմություններ այցելածս համայնքներից հինգի մասին: Այս պատմությունները գրված են գեղարվեստավավերագրական ոճով՝ ցույց տալով իմ՝ որպես հետազոտողի, լուսանկարչի, բարեկամուհու, ընտանիքի անդամի բախվող ինքնությունները:

Հետազոտական հարցադրումները

Հետազոտությունը փորձ է՝ հասկանալու և պատասխանելու հետևյալ հարցերին.

- Ինչպե՞ս է կանանց սուրճխմության պրակտիկան, կախված մասնակիցների տարիքից, սոցիալական դիրքից, դերից և այլ հանգամանքներից, ազդում սրճելու ընթացքում նրանց խոսակցության թեմաներին և խմբի դինամիկայի վրա:
- Ինչպե՞ս են սրճելու տարածքները ներազդում խմբում քննարկվող թեմաների, ինչպես նաև խմբի անդամների ազատության կամ կաշկանդվածության վրա:
- Ինչպե՞ս էր իմ՝ որպես հետազոտողի դիրքայնությունը այս տարածքներում ազդում քննարկվող թեմաների վրա, կանանց՝ դրանք քննարկելու լեզվի, ժեստերի և արտահայտման այլ ձևերի վրա:

Ֆեմինիստական քարտեզի պատրաստման մեթոդաբանությանս դիտողական (օբսերվացիոն) հետազոտությունն էր: Հետազոտությանս շրջանակներում այցելել եմ յոթ համայնքներ և ուսումնասիրել եմ տարբեր տեղանքներում սրճելու գործընթացներիը և խմբերում խոսակցությունների և կանանց խառնվածքի դինամիկան:

Այցելածս համայնքներն են՝

- Վանաձոր, Լոռի
- Բազում, Լոռի
- Բերդ, Տավուշ
- Արծվաբերդ, Տավուշ
- Դեբետ, Լոռի
- Ջրառատ, Շիրակ
- Ծիլքար, Արագածոտն

Դիրքայնություն

Ես ծնվել ու մեծացել եմ Վանաձորում: Մանկությանս հիշողությունների մեծ մասը տատիկենցս տնից է՝ Վանաձորի «Ջունգլիներ» թաղամասից: Տատիկենց տունը մանկությանս ամենատաք տեղերից մեկն էր: Տատս՝ Պայծառը, ում Լուսիկ էին ասում (երկար պատմություն է), իմ լավագույն ընկերն էր: Ցավով, բայց հպարտությամբ ընդունում էի էն փաստը, որ ես իր միակ լավագույն ընկերը չէի: Տատիկի ամենամոտ ընկերուհին հարևան Շողերն էր, ով իր առօրյայի գլխավոր մասն էր կազմում: Տատիկենց տնից իմ լավագույն հիշողություններից մեկը Շողերին ամեն օր հինգ անգամ դիմավորելն էր, կամ իմ ու տատիս Շողերի տուն գնալը:

Սուրճը տատիկենցս կյանքի հիմնարար գործոններից մեկն էր... շարժիչ ուժը: Ժամը 9-ին դուռը բացվում էր, ու Շողերը սուրճով լի տաք «ջազվեն» ձեռքը մտնում էր տուն: Մենք էլ էրեխեքով վազում էինք Շողերին դիմավորում ու հետ վազում մեր գործին: Տատն էլ ասում էր՝ «Ըհն, ես էլ ուզում էի կոֆին դնեյի բարձրանայի»: Շողերն էլ ի պատասխան ասում էր՝ «Հաջորդ կոֆեի ժամին էլ դու կբարձրանաս»: Օրն առանց սուրճ չէր սկսվում: Սուրճի վերջին ժամը միշտ վեցից շուտ էր, որովհետև Շողերն ասում էր վեցից հետո որ խմի, գիշերը լավ չի քնի:

Տատս շաքարային դիաբետ ուներ, ու ստիպված սուրճը դառն էր խմում: Ծողերն էլ, ով իմ տեսած ամենաքաղցրասեր մարդկանցից մեկն էր, ստիպված սկսել էր դառը խմել, որովհետև իրենց ընկերությունը հեչ էլ սուրճի մասին չէր: Իսկ որպես քաղցր՝ սեղանին միշտ դրված էր վազով «Մենթոս» կոնֆետներ, ու ես էդպես էլ չէի հասկանում՝ դրանով ոնց կարող էր սուրճը հաճելի լիներ: Բայց մյուս կողմից էլ մեզ՝ երեխեքիս համար դա մեծական կոնֆետ էր, ու տատենց սուրճխմության առիթից ելնելով, մեկ-երկու հատ թռցնում էինք սեղանից:

Ես շատ հետաքրքրասեր երեխա էի: Միշտ հիացմունքով ու զարմանքով էի լսում, թե ինչպես էին տատիկենք խոսում իրենց ընդհանուր ընկերների, ընտանիքների ու հարևանների մասին: Չնայած ճանաչում էի էդ մարդկանցից շատերին ու ինչ-որ չափով ինձ զգում էի նրանց սոցիալական միավորի լիարժեք անդամ, նախընտրում էի չմիջամտել իրենց խոսակցությանը, քանի որ որքան էլ որ ինձ «ներսի մարդ» էի զգում, միևնույն է չէի կիսում նույն գիտելիքների բազան, տեսակետը, տարիքը կամ սոցիալական համատեքստը, որ տատս ու Ծողերն ունեին: Որքան որ ես այս միավորի մի մասն էի, ես նաև կողմնակի մեկն էի: Ես մեկն էի, ով սահմանափակ հասանելիություն ուներ իրենց գիտելիքների բազային:

2019 թվականին տեղափոխվեցի Երևան ուսմանս համար: Չորս տարի ապրելով Չարբախ թաղամասում՝ հանդիպեցի կանանց սուրճ խմելու մշակույթի այլ իրականության՝ օտար բարբառով ու օտար մարդկանցով՝ ում խոսակցությունների առարկաներից և ոչ մեկի հետ ես կապ չունեի:

Թեև բամբասանքների և սուրճ խմելու սովորությունն ինձ ծանոթ էր, այդ պրակտիկայի միջոցներն ու ձևերը բոլորովին օտար էին: Այլ կերպ ասած, մի կողմից, սա մի պրակտիկա էր, որտեղ ես ինձ տանն էի զգում, բայց մյուս կողմից, սրճելու տարածքի հանրային լինելը, կանանց տարիքային զանազանությունը և իմ՝ նրանց ծանոթ չլինելը ինձ օտարի կարգավիճակ էր տալիս: Եվ ես բախվեցի մի այլ իրականության, որին պետք էր հարմարվել, և միակ ձևը դա անելու՝ զուգահեռներ տանելն էր իմ մանկության սուրճխմության իրականության հետ:

Ֆեմինիստական իմացաբանություն

Ինչպես Լորի Նիլսենն է ասում, «Ամեն մեկս գալիս ենք տարբեր խոհանոցի սեղանից: Ամեն մեկս խոհանոցի սեղանի մասին տարբեր պատկերացումներ ունենք» (1): Խոհանոցի սեղանը հնարավորությունների և վերահաստատման վայր է, ժամանակավոր կացարան: Սա մի տարածք է, որը սովորաբար մաշված ու մաքուր է և միաժամանակ միշտ խորհրդանշում է նյութական անհավասարությունը կանանց և տղամարդկանց աշխատանքի, ինչպես նաև արտոնալ և ոչ արտոնյալ կանանց աշխատանքի միջև:

Ուսումնասիրածս տեսական հիմքերը շրջանակ են բացում կանանց շրջանում բամբասանքի և/կամ լիցքաթափման պրակտիկայի, մասնավոր և հանրային միջավայրում դրա ընկալումների և նշանակության շուրջ ընդհանուր քննարկման վերլուծության համար:

1. Neilsen, Lorraine. Knowing Her Place. [Halifax, N.S.] : Backalong Books, 1998.

Հետազոտությանս կարևոր գործոններից մեկն էլ այն է, որ իմ՝ որպես ֆեմինիստ հետազոտողի հայեցակարգը հաշվի առնելը թույլ կտա հասկանալ հետազոտության մեթոդաբանական ընտրություններիս առանձնահատկությունները:

Սանդրա Հարդինգը (2) և Դոննա Հարաուեյը (3) մեծ ներդրում ունեն հայեցակետային տեսության զարգացման մեջ: Նրանք հավատում են, որ տեսության ըմբռնումը հնարավորություն է տալիս ճնշված խմբերում նպաստել ընդդիմադիր և կոլեկտիվ գիտակցության առաջացմանը: Այն նպատակ ունի այս խմբերին հնարավորություն ընձեռել դառնալու հետազոտության կոլեկտիվ «սուբյեկտներ», այլ ոչ միայն ուրիշների դիտարկման, տվյալների հավաքագրման, և իշխանական գիտելիքի կառուցման համար օգտագործման օբյեկտներ (4):

Ֆեմինիստական իմացաբանությունը հիմնված է կնոջ՝ որպես գոյաբանական կատեգորիայի հասկացության վրա, որը համակարգորեն ստորադաս դիրքում է կյանքի բոլոր ոլորտներում (5): Որպես այդպիսին, կանայք միավորված են իրենց փորձառություններով, ինչը, համեմատած տղամարդկանց փորձի հետ, էականորեն տարբեր ընկալում ունի հասարակության կողմից: Գենդերային տարբերություններից և անհավասարություններից առաջացած այս հայեցակետը տեղ է գտել ֆեմինիստական սոցիոլոգիական մոտեցումների մեջ: Այս մոտեցումներում ներառվում է «կենցաղային տիրույթը» որպես կանանց հավաքական փորձի հիմնական տեղակայում: Դրանից էլ առաջացել է «փորձառության» ընդունումը՝ որպես հետազոտության վավեր ուղղություն:

Գիտելիքի և փորձառության այլընտրանքային ձևեր ընդունելու միջոցով ֆեմինիզմը ընդլայնվել է՝ ընդգրկելով ոչ միայն կանանց, այլ նաև մնացած ճնշված խմբերին: Սյուզան Սփիքը համոզված է, որ ակադեմիկոսները և հետազոտողները կարող են ֆեմինիստական մոտեցումների միջոցով բարեփոխել գործելակերպերն ու հայեցակարգերը, որպեսզի դրանք միտված լինեն ծառայելու այդ խմբերի շահերին (6):

Լորի Նիլսենը վստահ է, որ միավորելով ակադեմիան և խոհանոցի սեղանը, տեղաշարժելով ցանկացած «գաղափարական կահույք», որն անհրաժեշտ է տեղ ազատելու համար, մեր հետազոտության կենտրոնը կրկին շեղելով գուցե երբեմն դեպի հակասական համատեքստեր, մենք կսկսենք լիովին ապրեցնել մեր փոփոխվող ինքնությունների, մարմնավորված իմացության արժեքի, անձնականի և քաղաքականի միջև կապի գաղափարները: Նիլսենը ճշմարիտ է՝ ասելով, որ օբյեկտիվությունը ճիշտ այն է ինչ ասել է արական սուբյեկտիվություն: Նա համոզված է, որ փորձառական (էմպիրիկ) աշխարհի մասին մարդու ամենաիրական գիտելիքները հիմնված են հենց մարդկային փորձի վրա: Նիլսենը առաջարկում է նորովի գրել քննությունը, որը կկենտրոնանա հենց կանանց փորձառությունների վրա:

2. Harding, Sandra. “Introduction: Standpoint theory as a site of political, philosophic, and scientific debate,” chapter in The feminist standpoint theory reader: Intellectual and political controversies (Routledge, 2004): 1-15
3. Haraway, Donna. “Situated Knowledges: The Science Question in Feminism and the Privilege of Partial Perspective.” Feminist Studies 14, no. 3 (1988): 575–99.
5. Lorraine Code, “A Feminist Epistemology?” essay, in What Can She Know? (Cornell University Press., 1991), 314–24.
6. Speak, Suzanne. “Planning for the Needs of Urban Poor in the Global South: The Value of a Feminist Approach.” Planning Theory 11, no. 4 (April 9, 2012): 343–60. https://doi.org/10.1177/1473095212440424.

Այս հետազոտությունը փորձ է ըմբռնելու և խորհելու հայկական հասարակության սահմաններում սուրձխմության պայմաններում կանանց գործորդության և նրանց տարբեր ինքնությունների դրսևորման առանձնահատկությունները՝ առօրեականությունը բերելով ակադեմիա և հակառակը:

Շիրկեթները և սուրձխմությունները. համեմատական հայացք

Արփի Համալեանի (7) լիբանանահայերի շրջանում հայտնի շիրկեթների կարևորության և դրանց նշանակության մասին հետազոտությանը ավելի քան տեղին է անդրադառնալ այս աշխատանքի մեջ: Ըստ Համալեանի՝ շիրկեթը թուրքերենից թարգմանվում է ինչպես համագործակցություն կամ ասոցիացիա: Այն համակարգվում է հիմնականում կանանց կողմից և ծառայում է կանանց տալու ֆինանսական անկախություն՝ խմբովի խնայողություններ անելու շնորհիվ:

Հայկական համատեքստում այս պրակտիկան հավասարազոր է «լատարեա» (ռուս. лотерея) կոչվածին: Շիրկեթները ենթադրում են հավաքույթներ, որոնց ժամանակ յուրաքանչյուր կին ներդնում է խմբի անդամների կողմից որոշված պայմանական գումար, որը միտված է ծառայելու այն անհատին ով ցանկացած պահին դրա կարիքը կունենա: Համալեանի հետազոտությունը կենտրոնացած է հարևանների շրջանում շիրկեթների լայն տարածման ուսումնասիրությանը: Շիրկեթի անդամների քանակը սովորաբար 5-50 հոգին է: Հանդիպումները շաբաթական կտրվածքով են՝ միջինում տարեկան 50 անգամ, բացառությամբ որոշ տոների: Հանդիպումները սովորաբար տեղի են ունենում այն կնոջ տանը ով համայնքում ամենքից շատ հարգանք է վայելում և ունի ամենամտերմիկ հարաբերությունները շիրկեթին «անդամագրված» կանանցից շատերի հետ: Հանդիպումներին տանտիրուհին հիմնականում մատուցում է սուրճ:

Ի տարբերություն շիրկեթի, սուրձխմության արարողակարգերը ոչ պաշտոնական նշանակություն ունեն: Դրանք ավելի հաճախ տեղի ունեցող հանդիպումներ են, որոնց համար կանանց անդամակցությունը ավելի ազատ բնույթի է և որոշ դեպքերում չի ենթադրում մշտականություն:

Այցելածս սուրձխմության համայնքները մի շարք զուգահեռներ ունեն շիրկեթների հետ: Այս համայնքներում տղամարդիկ հիմնականում բացակայում են, իսկ երեխաները գրեթե միշտ ներկա են: Այցելածս յոթ համայնքերից հինգում կային մեկ և ավելի երեխաներ: Չնայած երեխաները չէին մասնակցում խոսակցություններին, միևնույն է տարածքում նրանց ֆիզիկական ներկայությունը կարող էր խթանել խոսակցության ժամանակ թեմաների բացմանը: Երբեմն էլ երեխաների վրա կանանց ուշադրության շեղումը կարող էր դանդաղացնել խոսակցության զարգացումը և կարող էր փոխել զրույցի ուղղությունը:

7. Hamalian, Arpi. “The Shirkets: Visiting Pattern of Armenians in Lebanon.” Anthropological Quarterly 47, no. 1 (January 1, 1974): 71–71. https://doi.org/10.2307/3317027.

Շիրկեթներում բացակայում են թե՛ տղամարդիկ թե՛ երեխաները: Շիրկեթի գլխավոր առանձնահատկություններից մեկը այն է, որ այն համարվում է գաղտնի համայնք: Կանայք չեն խոսում շիրկեթների մասին իրենց ամուսինների հետ: Այնուամենայնիվ, տղամարդիկ տեղյակ են համայնքում շիրկեթների գոյության մասին:

Ինչպես շիրկեթներում, սուրձխմությունների համայնքում նույնպես առաջնորդը կամ խոսակցությունների վարողը հիմնականում այն կինն էր, ով թեթև էր, աշխույժ, կատակասեր և ով ամենաշատն էր նպաստում խոսակցության զարգացմանը: Ինչպես Համալեանն է նկարագրում՝ նա համարվում է խմբի «զվարթ կինը», և հենց նա է սահմանում օրվա խոսակցության կամ բամբասանքի թեմաները:

Բամբասանքը կառուցողական դեր ունի շիրկեթներում: Կանայք ովքեր շիրկեթի անդամ չեն վտանգավոր են, որովհետև նրանց բամբասանքը կարող է օգտագործվել համայնքում ի շահ իրենց իսկ կարգավիճակի բարձրացման: Շիրկեթի ներսում բամբասանքը օգնում է պահպանել ընդհանուր համայնքում յուրաքանչյուր կնոջ հանրային համբավը:

Այցելածս սուրձխմությունների համայնքներում բամբասանքը կենտրոնական դեր ուներ: Այն ուղղված էր պահպանելու խմբի մասնակիցների մտերմությունը և ուներ լիցքաթափող, թերապևտիկ և հաճախ ազատագրող ազդեցություն:

Դաշտային աշխատանք. հասանելիություն համայնքներին

Հունիսի 7-ը դաշտային աշխատանքիս առաջին օրն էր:

Երևանից Վանաձոր գնալու ճանապարհին միտքս ճամփորդում էր տարբեր ուղղություններով, քարտեզելով այն համայնքները, որտեղից կմտաբերեմ մարդկանց, ովքեր հարևանային սուրձխմության ակտիվ մասնակիցներից են, կամ իրենց ընտանիքում և/կամ համայնքում կունենան նման պրակտիկայով զբաղվող կանանց: Միակ լուծումը, որ ի վերջո մտքիս է գալիս դա մայրիկիս օգնության դիմելն է:

Մայրս մեծ դեր է ունեցել համայնքների մեծ մասին հասանելիություն ունելալուս մեջ: Նախքան դաշտային աշխատանքս սկսելը նա շարունակաբար զանգում էր տարբեր կանանց՝ պատմելով հետազոտությանս մասին: Ոմանք հետաքրքրություն հայտնեցին մասնակցելու, մյուսները կոնտակտներ փոխանցեցին այլ կանանցից ովքեր հնարավոր էր, որ ցանկանային մասնակցել: Մտքումս չկար կոնկրետ տարիքային խմբի կամ սոցիալական կարգավիճակի կանանց պատկերացում: Հստակ էր միայն այն, որ հետազոտությունս ներառելու է կանանց՝ Երևան համայնքից դուրս. նրանց, ում մարգինալացումը ներառում է նաև մարզային շերտ:

Ինձ համար կարևոր էր տեսնել ու լուսաբանել այն կանանց առօրյան, ովքեր հեռու են մայրաքաղաքի խառնաշփոթից: Նրանց, ում համար հարևաններով սուրձ խմելը օրվա միակ պահն է, որ թույլ է տալիս նրանց տնից դուրս գալ կամ մի քանի րոպեով առօրյայի անվերջ գործից կտրվել:

Վանաձոր, Լոռի. հուլիսի 8, 2023

Սուրճի սեղանը ինտեգրման տարածք է

Մամայիս ընկերուհին՝ Աստղիկը իմ ճանաչած ամենաթեմայաշատ կանանցից մեկն է: Միշտ հաճելի է իրենց տուն գնալը ու իրեն մեր տանը հյուրընկալելը, որովհետև ինքը միշտ ֆանտաստիկ պատմություններ ունի պատմելու:

Հունիսի 7-ին հասնում եմ Վանաձոր, մաման նախորոք պայմանավորված է լինում Աստղիկի հետ, որ հաջորդ օրը՝ ամսի 8-ին գնանք իրենց տուն սրճելու: Վերցնում եմ նոթատետրս, տեսախցիկս, քաղցր մի բան ու քայլելով հասնում ենք հարևան թաղամաս: Եթե հետաքրքիր է, թաղամասի անունն էլ է Վանաձոր:

Ես ու մաման մտնում ենք տուն ու տեսնում Աստղի ինչպես միշտ ճոխ սպասքով ու խնամքով դասավորված սեղանը: Կատյան՝ Աստղիկենց նոր հարևանը, արդեն էնտեղ էր: Ու մենք սկսում ենք ծանոթանալ: Պարզվեց՝ Կատյան ամուսնու հետ ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով արդեն մի քանի ամիս էր Վանաձոր էր տեղափոխվել: Կատյան 41 տարեկան է, Սիբիրից: Սովորել է մանկավարժություն, բայց երկար տարիներ է չէր աշխատում իր մասնագիտությամբ:

Աստղը ինչ որ չափով Կատյային կոնտեքստ տվել էր հետազոտությանս մասին, դրա համար շատ ավելի հեշտ էր բացատրել, թե ինչի համար եմ էնտեղ: Բայց միևնույն է, Կատյան խնդրեց մանրամասնեմ, թե հետազոտությունս ինչի մասին է: Հետաքրքիր է էստեղ տեսնել իմ դիրքայնությունը. Աստղի համար ես Սվետայի աղջիկ Արփին էի, իսկ Կատյայի համար ես հետազոտող ու լուսանկարիչ էի:

Չգիտեի, որ էսքան մոռացած կլինեմ ռուսերենը: Փորձում եմ մի երկու բառով ներկայացնել ինձ, ու ինչով եմ զբաղվում, բայց զգում եմ՝ չեմ կարողանում, ու Կատյան հուսադրող հայացքով նայում է ինձ ու ասում, որ կարող եմ հանգիստ անգլերեն խոսեմ՝ հասկանում է: Ու հետո մտածում եմ՝ ինչի պիտի ամաչեմ նրանից, որ ռուսերենով լավ չեմ խոսում: Ինչի՞ եմ պարտավորված զգում տիրապետել այս գաղութային լեզվին իմ մայրենի լեզվին հավասար: Բայց հետո հասկանում եմ, որ ռուսերենի փոխարեն խոսում եմ մի ոչ պակաս գաղութային լեզվով, ու էստեղ իմ ինքանախարազանումը դադարում է: Ես շարունակում եմ խոսել:

Խոսակցությունը ոչ մի պահի չի դադարում: Խոսում ենք երբեմն զուգահեռ, իրար հերթ չտալով: Ես՝ Կատյայի հետ, քանի որ ես էլ ինքն էլ համարյա հավասարապես դրսի մարդ ենք մամայի ու Աստղիկի փոքր համայնքում ու սահմանափակ կոնտեքստ ենք կիսում խոսակցությունների անձանց և առարկաների մասին:

Մաման էլ՝ Աստղիկի հետ է խոսում, քանի որ երկուսով ավելի շատ ներքին հայացք ունեն որոշ թեմաների շուրջ: Կատյան ու ես ավելի շատ խոսում ենք կրթությունից, ճանապարհորդելուց. բաներից որոնք ավելի շատ են մեզ կապում քան մամանենց: Ու զգում էի, որ մեր խոսակցության ընթացքում զուգահեռաբար մաման ու Աստղը հասցնում են կիսվել իրենց կյանքի վերջին նորություններով:

Աստղը հարցնում է՝ սուրճը ով ոնց է խմում: Ես հրաժարվում եմ (ինչը հանցագործությանը հավասար մի բան է այս հետազոտության համատեքստում), Կատյան ու Աստղը դառն են խմում

մաման ինչպես միշտ քաղցր:
Մինչ սուրճի եփվելը խոսակցությունը ոչ մի վայրկան կանգ չի առնում: Հետաքրքիր էր, որ Աստղը, չնայած խոհանոցում էր, միևնույն է չէր դադարում խոսակցության մասը լինելուց (սենյակների բաժանումը խոչընդոտ չի սուրճխմության մաս լինելուն, եթե նույնիսկ սուրճը դեռ պատրաստ էլ չի):

Կատյան վերցնում է առաջին բաժակը և ասում՝ «Ես մեր մոտ [Ռուսաստանում] նման բաժակներ չեմ տեսել: Մենք ապակուց բաժակներով ենք միշտ խմել սուրճը»: Կատյայի համար Հայաստանում սպասքին ու սեղանի ձևավորմանը այդքան մեծ նշանակություն տալը այն հազարավոր մշակութային շոկերից մեկն էր եղել, որն ունեցել է Հայաստան տեղափոխվելու առաջին շաբաթվա ընթացքում: Բայց դե գլխավոր շոկը ունեցել էր նրանից, թե ինչպես են հարևանները ընդունել Կատյային իրենց համայնք ու, թե ինչպես են շարունակաբար օգնում նրան ինտեգրվել հայ հասարակության մեջ:

Մարգարիտան (կամ, ինչպես հարևաններն են ասում՝ Մարգուշը), ով Աստղենց դրկից հարևանն է և շենքի բնակիչների «մաման», Կատյայի համար տեսություն էր մշակել, որ եթե սուրճի ժամանակ խոսեն միայն հայերեն Կատյան ավելի շուտ կսովորի լեզուն: Կամ էլ սա փորձ էր օրվա անհոգ պահը ռուսերեն խոսելու ավելորդ հագսից ազատելու: Մարգուշը բոլորին մամայություն անողն է: Իր համար չկան լավ ու վատ հարևաններ:

«Եթե մի շենքից ենք, ուրեմն մի տնից ենք» կարգախոսը բավականին լավ բացատրում է Մարգուշ տոտայի կյանքի փիլիսոփայությունը:

Աստղիկը պամում ա, թե իր մանկության տարիներին իրենց հարևանությունը ոնց էր հայտարարում, որ սուրճի ժամն է: Օգտագործելով շենքի գազատար

խողովակը և ֆիզիկայի իմացությունը, հարևանները մեխանիզմ էին մշակել թե ոնց բոլորին կանչեին սուրճի: Օրվա սուրճ եփողը թավայով խփում էր խողովակին, ազդարարելով, որ սուրճը պատրաստ է: Ու հարևանները գործերը թողում ու վազում էին սրճելու:

Կատյայի համար Վանաձորն ու հարևանությունը իր տնից հեռու տունն է: Էստեղ ինքը գտել է համայնք, որտեղ կարողանում է շփվել, սովորել, կիսվել, պատմություններ պատմել ու լսել: Իսկ սուրճի սեղանը այն տեղն է, որը թույլ է տալիս լավագույն ձևով դա անել:

Բազում, Լոռի. հուլիսի 9, 2023

Սուրճի սեղանը ծիծաղի ու հուզմունքի տարածք է:

Բանակի քեֆի էինք հրավիրված: 25 հոգի էինք՝ տասը կին, որոնցից երեքը 20–25 տարեկան, վեցը միջին տարիքի և մեկ տատիկ, 13 տղամարդ և երկու անչափահաս աղջիկ երեխա: Քեռուս տղային ծանապարհում էինք բանակ: Քեֆը Բազում գյուղում էր՝ անտառային բացօթյա տաղավարներից մեկում:
Ներքին ֆեմինիստս իրան մեջից կերավ, երբ տեսա սեղանների դասավորությունը ու տղամարդկանց ու կանանց հստակ բաժանումը: Բայց մյուս կողմից էդ դասավորությունը ինքնին բավականին շատ բան էր պատմում մարդկանց պահպանողական մտածելակերպի ու ապրելակերպի մասին:
Մի խոսքով, էդ ակնհայտ սեգրեգացիոն շոկս դարձավ վրդովված բարձրաձայն մեկնաբանություն, ինչը բնականաբար արհամարհվեց: Ու կանայք նստեցին մի սեղանի շուրջ, տղամարդիկ՝ մյուս:

Մենյուն ավանդական էր՝ խորոված, խաշլամա, կանաչի, զեյթուն և այլն: Շատ երկար չանցավ մինչև սուրճի պահը գալը: Սպասում էի՝ տեսնել ում են հանձնելու սուրճ դնելու պատասխանատվությունը: Դա լուրջ գործ էր, որովհետև պետք էր բոլորի նախապատվությունները հաշվի առնել: Մեկը քաղցր էր ուզում, մեկը՝ դառը, մեկն էլ՝ նորմալ: Ու ես էդպես էլ մինչև հիմա չհասկացա նորմալը որն է (ոչ մի կոնտեքստում, իրականում): Տենց, ես լուրջ դեմք ընդունած կամերան մի ձեռքս, նոթատետրս՝ մյուս, զբաղվածի տպավորություն էի թողնում: Չնայած մեկ է՝ որոշել էին, որ եղբորս նշանածին տան էդ գործը՝ «նոր հարսին»: Ինքն էլ առանց տրտնջալու բոլորից հարցուփորձ արեց բոլորի սուրճ խմելու նախասիրությունները:

Մարդկանց քանակից կարող եք ենթադրել, որ

ջազվեն անիմաստ բան էր: Ու այս դեպքում միակ այլընտրանքը մաշված կաթսան էր, ումից շատ կուզեի կյանքի պատմություն վերցնել, եթե խոսել իմանար:

Կաթսան տեղավորեց այնքան սուրճ, ինչքան որ պետք էր: Իսկ սուրճին սպասելու ժամանակ սեղանը լուռ չէր: Խոսում էին հիմնականում խնջույքի «հերոսից»՝ Հայկից, ու նրանից, թե ինչ լավ է, որ ինքը դրական էր տրամադրված բանակ գնալու փաստին, ու հետևաբար խնջույքի տրամադրությունը բարձր էր պահում:

Սուրճը պատրաստ էր: Լցնելը զգուշություն ու հատուկ հնարք էր պահանջում, դրա համար փորձառու մարդ էր պետք: Օգնության հասավ մայրս՝ շերեփը ձեռքին:
Սուրճը բաժանելն էլ պակաս պատասխանատվություն չէր պահանջում: Կանանցից մեկի բախտը չէր բերել իրեն բաժին հասած սուրճի մեջ. բաժակում ավելի շատ նստվածք էր քան հենց սուրճ: Ամենայն հավանականությամբ նրա բաժակում վերջինն էին սուրճը լցրել: Մորաքույրս էլ պահը չկորցնելով ասաց՝
-Գառնիկը (տղան) սուրճը սկսել ա դառը խմել: Վերջերս ասում ա՝ կոֆեն ինչ-որ համովացել ա, ինչի չէի միշտ դառը խմում: Դե ես էլ ասում եմ էն վախտ տակի մնացածն էինք քեզ տալիս, հիմա գլխից ենք լցնում:

Սրճելու ընթացքը ոչ թե ստեղծում էր խոսակցություններ, այլ փոխում էր դրանց ընթացքը:

Մինչ սուրճի կումերի ընթացքում խոսակցությունները վայրկենական դադարներ էին ունենում, ես փորձում էի պահը բռնացնել ու մանրամասն բացատրեմ հետազոտությանս մասին: Բայց մորաքույրս որոշում է ինքը վերցնի այդ հնարավորությունը, ու ձեռքի հետ պատմում է տատիկենցս տան մասին պատրաստածս ֆիլմերից:
Հիշեցինք տատիկին, պապիկին, Հայկի տատիկ Ազիզին ու թե ինչքան բարության կար էդ կնոջ մեջ: Մայրիկս հիշացրեց Ազիզի սուրճի բաժակ նայելը:

–Բան չէր հասկանում, բայց մեկա նայում էր: Էնքան ա լավ բաներ ասեր մեր:

Հիշեցին, թե ինչպես էր Ազիզ տատիկը բոլորի համար հորինած պատկերներ տեսնում ու բոլորը երջանկություն խորհրդանշող ու շատ ուրիշ դրական բաներ, որ բաժակի տերը իրեն լավ զգար:

Հուզմունքն էլ արտահայտեցինք պարբերական լռություններով: Բայց սեղանի դասավորությունը խմբավորումներ էր առաջացրել, ինչի արդյունքում մեր լռությունների արանքում լսվում էր կողքի խմբի կանանց ծիծաղը:

Ջրառատ, Ծիրակ. օգոստոսի 13, 2023

Սուրճի սեղանը նվաճումների մասին հպարտությամբ խոսելու տարածք է

Հունիսին ներկայացրի այս ծրագրի առաջարկը ու ընկերներից մեկը՝ Ծահանեն, ով ուրիշ հետազոտության վրա է աշխատում Ֆեմպատումի շրջանակներում, պատմեց Ջրառատում իր տատիկի՝ հարևանների հետ սուրճ խմելու պատմություններից: Ծահանեի տատիկի՝ Հասմիկի պատմությունը շատ սրտիս կպավ ու մի օր կապվեցի հետը, որ գնանք Ջրառատ: 2021-ին Հասմիկ տատիկի մահից հետո տունը դատարկվել էր: Բայց Ծահանեի մայրիկը՝Հայկանուշ տոտան տունը անտեսված չի թողնում. հաճախ գնում-գալիս է, մաքրում, դասավորում, հարևանների հետ տեսնվում:

Օգոստոսի 12-ին գնացինք Գյումրի՝ Ծահանեենց տուն: Ծանոթացա Ծահանեի ընտանիքի հետ: Քրոջ՝ 19 տարեկան Նանեի ու եղբոր՝ 10 տարեկան Արտակի հետ գնացինք Գյումրիով պտտվեցինք, մինչև գիշերվա հազարը խոսեցինք Ծահանեի սենյակում ու հաջորդ օրը էրեխեքով Հայկանուշ տոտայի հետ գնացինք Ջրառատ:

Ծահանեն «գիդություն» էր անում: Անցանք Ախուրյանով, Կառնուտով (որտեղ Ծահանեն էր մեծացել), Բասենով, որի հին անունը, ինչպես Ծահանեն նշեց՝ Մեծ Քյափանակ էր և վերջապես հասանք Ջրառատ: Արտակը ոգևորված ինձ տան հետ էր ծանոթացնում, ու ասում էր՝ «սա էլ նկարի, նա էլ նկարի: Սպասի գոմը բացեմ էդ էլ նկարի»: Տան ամեն հատվածը պամություն էր: Դրած ամեն իրը թանգարանային նմուշ: Տանը թոնիր կար, որը փակել էին, որովհետև վաղուց էլ չէր օգտագործվում: Թոնրի կողքը թախտ էր՝ ժամանակին Ծահանեի պապիկի սիրած տեղը: Նիշայի անկողնու ծածկոցը նույնն էր՝ Ծահանեի ալբոմի նկարներին համապատասխան:

Հայկանուշ տոտան զանգեց հարևաններին: Մինչև իրանց գալը սեղանը պատրաստ էր: Արտակը վազվզում էր, մամային էր օգնում, տանում-բերում, ձեռքի հետ «պեչենի» թռցնում: Հայկանուշ տոտան սեղանի վերջին դետալներն էր ավելացնում, մեկ էլ տեսնենք երկու հարևան կանայք կամաց-կամաց մոտենում են տանը:

Դուրս եկանք դիմավորեցինք, Ծահանեն ծանոթացրեց մեզ, ու երկուսով գնացինք խոհանոց սուրճը դնելու: Խոհանոցում բան չէր փոխվել Հասմիկ տատիկի մահից հետո: Ծաքարամանի մեջ Ծահանեի փոքր ժամանակվա խաղալիք գդալն էր, որ Հասմիկ տատիկը հայտնաբերել ու հարմար էր գտել օգտագործելու:

Մինչև սուրճը բաժանում էինք Ծահանեն կանանց ծանոթացնում է իմ հետազոտության հետ:
-Ես կին ճարտարապետների մասին կենեմ, ինքը կանանց կոֆե խմելու մասին կենե,- ասում է Ծահանեն:
-Կոֆե խմելը ավելի լավ է: Միշտ կնստինք օրվա մեջը իրեք անգամ էդ հարցը կլուծինք,- ոգևորված ասում է կանանցից մեկը:
-Իրեք անգա՞մ,- անկեղծ զարմանքով հարցնում է Ծահանեն:
-Դե մի իրեք չորս, լավ:
-Իրեք անգամը շատ հաճելի է, ընդից հետո արդեն չափից շատ ա,- հավելում է մյուս հարևանը:

Գյուղը խմելու ջրի լուրջ խնդիր ունի ու դա էլ խոսակցության առաջնային առարկաներից էր: Մոտս դիսոնանս առաջացավ երբ լսեցի ջրի խնդրից խոսելը ու երբ մտաբերեցի գյուղի անունը:

Ջրի շարունակական սղությունը մեծապես բարդացնում է կանանց առօրյա կյանքի կառավարումը: Հետևաբար, այս խնդրի մասին կիսվելը ու դրա հետ հարաբերվելու լուծումներ գտնելը օրվա խոսակցության անխուսափելի մասն են կազմում:

Բայց, այս տարածքը ոչ այնքան խնդիրներից խոսելու այլ ուրախ, զավեշտալի և հուզումնալից հիշողությունները մտաբերելու տարածք է:

Կանայք շարունակաբար հիշում են Հասմիկ տատիկին, ու մյուս հարևան տատիկներին:

–Ռոզը տանջված է կնիկ է–, գրեթե շշուկով ասում է հարևանուհիներից մեկը:
–Հիշում եմ Ռոզ տատը մի օր էկավ, թթու ապուր էր բերել, մի կերպ կերանք,– մտաբերեց Ծահանեն, ասես ցրելով խոսակցության ծանր նոտայի շերտը:

Իսկ մյուս հարևան Արաքս տատիկի կազմակերպվածությունը մտաբերելը ասես ամեն խոսակցության հիմնաքարը լինի:

–Հիշում եմ տատիկը ասում էր պտի Արաքսի պես ըլնես: Դեղերը դնես, ժամը իմանաս՝ խմես,– խինդով ասաց Ծահանեն, ու բոլորը ծիծաղեցին:

Խոսակցությունների կեսից շատը չէի հասկանում, որովհետև առարկաներից ոչ ոքի չէի ճանաչում: Բայց ծիծաղելու ժամանակ ծիծաղում էի, գլխով անելու ժամանակ գլխով անում:

Զրույցի կեսին խոսակցության ուղղությունը արագ և անսպասելի տեղաշարժ է ունենում դեպի կանանցից մեկի վարորդական իրավունքի ձեռքբերման զավեշտալի փորձերը և ձախողումները:

–Ծահանե ջան, էսօր խաղողօրինեք է, տղուս ասեմ՝ ավտոյով տանի ձեզ եկեղեցի պտտվեք էկեք, – ասում է կանանցից մեկը:

Կարճ դադարից հետո արձագանքում է մյուս կինը համաձայնելով ասում է:

–Հա, ազիզ, թող տանի պտտի բերի: Էսի էլ է վարորդ ընձի էլ է տեղափոխում,– ձեռքով ցույց է մյուսին:

Ծահանեյի զարմանքին բոլորս համաձայնեցինք: Կանանց համար զավեշտալի էր հատկապես գյուղի տղամարդկանց շփոթված արձագանքները կնոջը՝ մեքենայի ղեկին տեսնելիս:

Հայկանուշ տոտան, հիանալով հարևանուհու համարձակությամբ, զղջում է իր այսպես ասած «վախկոտ» լինելու հանգամանքը:

–Ես կվախնամ, չեմ կարա նստեմ,– ասում է Հայկանուշ տոտան:
–Էդ քեզ կթվա: Որ նստես ավտո դու արդեն կսկսես կառավարել,– խրախուսում է վարորդ կինը:
–Ես իրա աղջիկն եմ, – ասում է Ծահանեն, Հայկանուշ տոտայի ասածների տակ ստորագրելով:

Այս սուրճի սեղանը հիշողությունների, ծիծաղի ու նվաճումների տարածք էր: Սա մի տեղ էր, որտեղ կանայիք չէին կաշկանդվում խոսել իրենց կարիքներից, դժվարություններից, վախերից ու ձախողումներից: Սա մի տեղ էր, որտեղ բոլորը հավասարը հավասարին էին անկախ տարիքից, կարգավիճակից ու դերից: Մի տեղ էր, որտեղ կանայք գործի դրեցին իրենց տարբեր ինքնությունները. մոր, տատիկի, քրոջ, աղջկա, ուսանողի, հարսի և վերջապես վարորդի:

Դեբետ, Լոռի. օգոստոսի 27, 2023

Սուրճի սեղանը ամոքման տարածք է

Հաշվի առնելով, որ հետազոտությունս միտված է ներառելու հնարավորինս տարբեր առօրյա ու կյանքի պատմություն ունեցող կանանց՝ ինձ համար կարևոր էր նաև տեսնել, թե ինչ տարբեր ֆունկցիաներ կարող էին սուրճի տարարածքները կատարել:

Մայրիկիս օգնող ձեռքը էստեղ էլ ա գործի դնում իր կապերը ու զանգում է Դեբետի համայնքապետին ում հետ գործնական լավ հարաբերություններ ունի: Համայնքապետը խոստանում է խոսել Արցախից տեղահանված երկու ընտանիքի հետ, ովքեր իրար կողք են ապրում (մի բաժանարար պատով): Ընտանիքները համաձայնում են ինձ հյուրընկալել: Գնում եմ Դեբետ:

Ընտանիքներից մեկը Հադրութի շրջանի Հայկավան գյուղից էր: Ընտանիքում կինն էր, ամուսինը, տատիկը և վեց երեխաները: Մյուս ընտանիքը Քաշաթաղի շրջանի Հայկազյան գուղից էր:

Ընտանիքում կինն էր և ութ երեխաները: Ամուսինը՝ պայմանագրային զինծառայող, ընտանիքից հեռու էր: Երկու ընտանիքները Արցախից բռնի տեղահանվել են 2020 թվականին:

Մինչև Դեբետում կացարան ստանալը ընտանիքները տեղակայվել են Հայաստանի տարբեր համայնքներում: Մի ընտանիքը Դեբետ տեղափոխվել է 2021 թվականին, մյուսը՝ 2022-ին: Իրար հետ արդեն մեկ ու կես տարի ա մի ընտանիքի պես են ապրում:

Սուրճխմությունը բակում էր: Սուրճը սկուտեղով աթոռին էր արդեն: Ես ինչպես միշտ հրաժարվեցի սուրճից, ինչից հետո Աստղիկը, ով սուրճի պատասխանատուն էր՝ երիտասարդ հարսը առաջարկեց թեյ կամ ջուր:

Տարածս քաղցրավենիքը կայծակնային արագությամբ բաժանվեց տարածքում ներկա երեխաների մեջ:

Կանանց նայելով հարցրեցի՝ քանի անգամ են սուրճ խմում օրվա մեջ:

– Դե մի 6-7 անգա...

– Օրվա մեջ քսան անգամ,- առաջ ընկնելով պատասխանեց ամուսինը:

– Բա ի՞նչ թեմաներից եք խոսում, - հարցնում եմ ես:

– Դե որ իրեք կնիկ նստեն, թեմա չե՞ն գտնի, քուր -, ծիծաղելով պատասխանեց ամուսինը:

– Հիմնականում էրեխեքից, դպրոցից, թե ինչ ենք հագցնելու երեխեքին, օրվա հոգսերից,- ի պատասխան ասաց Աստղիկը:

Ուզում էի հարցնել՝ մնացած երեխաները որտեղ են, մեկ էլ տեսնեմ ջրի ծանր դույլերը երկու երկու բռնած գալիս են հեռվից:

– Ըհն, տե՛ս, էսօրվա թեման էլ ջուրն էր: Ջուր չունեինք, - երեխաների ուղղությամբ նայելով ասում ա ամուսինը:

Երեխաները ծանր դույլերը դնում են գետնին մեկ էլ տեսնեմ 2-3 տարեկան երեխաներից մեկը այումինե բաժակը ձեռքն առավ ու երեխաները ծանր դույլերը դնում են գետնին մեկ էլ տեսնեմ 2-3 տարեկան երեխաներից մեկը այումինե բաժակը ձեռքն առավ ու դույլից ջուր վերցնելով տվեց, որ խմեմ: Էրեխեքի համար ջուրը ամենակարևոր ու թանկ բանն էր (երկու ամիս ա տանը ջուր չեն ունեցել) ու ինքը ուզեց, որ ինձ հետ էլ կիսվի:

Խոսակցությունը ծավալվում է Արցախում իրենց կյանքի շուրջ:

– Արցախում ամեն ինչ էլ ունեինք: Քսան հեկտարով բոստաններ էինք մանում: Ընդեղ սեմուշկեն էլ չրթեիր գցեիր գետնին ահագին բերք էր տալիս,– ամուսինը հպատությամբ բայց կարոտով հիշեց:

Դեբետում զրկված են ցանելու–հնձելու հնարավորությունից: Տան դիմաց միայն բետոն է:

– Ծատ դժվար ա, էստեղ կյանքը Արփի ջան: Չես կարա էրեխուն ճղած կոշիկով ուղարկես դպրոց,– Աստղիկը հուսահատությամբ ասեց:

– Խ՞ի չես կարա: Հեչ էլ դժվար չի, ինչ եք ասում: Լացը լաց ա բերում,– հակաճառեց ամուսինը: Երեխաների խաղն ու ծիծաղը շարունակաբար խախտում էր ցավոտ լռությունը: Աչքս ընկավ էրեխեքից ամենաանձայնին, ով աստիճանին նստած գիրք էր կարդում. ամառային արձակուրդների հանձնարարություններն էր անում:

– Անունդ ի՞նչ ա–, հարցրեցի:

– Տաթև:

– Տաթև, հլը պատմի՝ Արցախից ի՞նչ ես հիշում: Ո՞նց սկսվեց պատերազմը, – հարցրեց Աստղիկը:

Անկեղծ՝ չէի պատրաստվում էդ հարցը տալ, բայց հետաքրքիր էր՝ ինչ կասեր:

– Թուրքերը որ մեզ կրակում էին...

– Դու թո՞ւրք ես տեսել, աղջիկ ջան,– միջամտեց հայրը:

– Դե չի տեսել, լսել ա, մի խոսքով,– Աստղիկը արձագանքեց:

– Հա լսել եմ: Հետո Երևանից էկան, մեզ նստացրեցին ավտոն ու տարան,– շարունակեց Տաթևը:

– Է՛ էդ մի պատմի, հլը պատմի՝ ոնց հեծանիվը ջարդեցին ախպերներդ,– ասաց հայրը: – Պատմի, թե ոնց ենք ապրել:

Տաթևը հերթով թվարկում ա ինչ անասուն ունեին, ինչ էին ցանում: Կողքից մաման ու պապան հավելումներ էին անում:

– Ձին չի սատկել, ծախել ենք: Վարունգը բա՛ վարունգը, Տաթև,– բարկացավ հայրը...

Այս տարածքը խոսելու տարածք էր: Սա ամոքման ու լսված լինելու տարածք էր՝ ոչ այնքան

կանանց, որքան տղամարդու համար, ով համայնքում ոչ պակաս ճնշվածի կարգավիճակում էր՝ տեղահանված լինելու և դասակարգային պատկանելիության տեսանկյունից: Իսկ երբ վերջում էրեխեքից մեկը ձեռքս համբուրեց, խորապես գիտակցեցի, որչափ մեծ է լսված լինելու և արտահայտվելու նրանց կարիքը:
Հետ գնալու ճանապարհին մտածում էի, որ չկարողացա ապահովել էն տարածքը, որը թույլ կտար հենց կանանց արտահայտվել ու լսված զգալ: Մտածում էի, որ չստացվեց հետևել հետազոտությանս օրակարգին, որ չկարողացա պատասխանել հարցադրումներիցս յուրաքանչյուրին: Բայց տեսությունը ինձ հետ բերեց հասկանալու, որ ֆեմինիստական իմացաբանությունը մենակ կանանց մասին չի, այն նաև տղամարդկանց այդ դիտանկյան ներքո վերլուծելու մասին է (8):

Ծիլքար, Արագածոտն. Սեպտեմբերի 9, 2023

Սուրճի սեղանը ապահով տարածք է

Հունիսի մեկն էր: Երևանից Վանաձոր էինք գնում ընտանիքով: Հասնում ենք Արագածոտնի մարզ

ու տեսնում ենք կանանց ճանապարհի վրա տարբեր մթերքներ վաճառելիս: Առաջին միտքը, որ մոտս ծագում է՝ այդ կանանից մի քանիսի հետ զրուցելն էր: Ու հայրիկիս ասեցի, որ կանգնի հաջորդ կանանց հանդիպելուց:
Մոտ մի հինգ րոպե էլ գնացինք, ու տեսնենք երկու կին իրար կողք նստած ավելուկ են հյուսում: Կանգնում ենք ու ես ու մայրս իջնում ու քայլում ենք կանանց ընդառաջ: Մայրս առաջ է ընկնում ու կսում ծանոթանալ կանանց հետ: Պատմում է իմ մասին, հետազոտությանս մասին, ու հարցնում՝ հետաքրքրված կլինեն մասնակցել թե ոչ: Կանայք ոգևորությամբ համաձայնում են, փոխանցում իրենցից կոնտակտներ: Ես էլ նկարում եմ իրենց տունը, որ գալու դեպքում տարածքում հեշտ կողմնորոշվեմ:

Օգոստոսին որոշում եմ գնալ Ծիլքար: Ասում եմ՝ «լավ է ուշ քան երբեք» ու զանգում հանդիպածս կանանցից մեկին՝ Դոնարային:

–Բարև ձեզ, չգիտեմ՝ ինձ կհիշեք, թե չէ: Ես Արփին եմ, մի անգամ տեսանք ձեզ ճանապարհին ու խոսեցինք,– մի քիչ կաշկանդված ասում եմ ես, համոզված լինելով, որ ինձ չի էլ հիշի:

–Վա՜յ, Արփի ջան, ես էլ ասում էի ինչ եղար, ինչի չես գալիս: Ես արդեն բոլոր հարևաններիս ասել եմ, որ գալու ես մեզանից ինտերվյու վերցնես,– ջերմագին պատասխանում է Դոնարան:

8. Ընտանիքին որևէ կերպ օգնել ցանկացողները կարող են նամակ ուղարկել ինձ՝ arpi.ghambaryan00@gmail.com էլեկտրոնային հասցեին:

Բացատրեցի, ավելի մանրամասն թե ինչի մասին է հետազոտությունս, բայց հասկացա, որ հեռախոսով շատ ավելի դժվար ու անիմաստ է բացատրել: Պետք էր գնալ Ծիլքար: Իսկ պատրաստակամ ընկերներ ունենալը գերազանց մոտիվացիա էր գործը չհետաձգելու: Ելենան՝ ով դեռ հունիսից ոգևորված սպասում էր իմ հետ հետազոտությանս համար ինչ-որ համայնք գնալու, մերթընդմերթ հիշեցնում էր «երբ ենք գնում մի գյուղ» հաղորդագրություններ ուղարկելով: «Մի գյուղ»-ը դարձավ Ծիլքարը ու Ելենայի հետ ճանապարհ ընկանք. ղեկին Ելենան էր, մեքենան՝ Ելենայի հայրիկինը: Խոսքով տարված՝ չզգացինք էլ երբ հասանք գյուղ: Նկարովս առաջնորդվելով հեշտությամբ գտանք Դոնարայենց տունը, տան դիմաց էլ՝ մեզ սպասող Դոնարային:

-Բարով եք եկել, համեցեք, հարևանիս էլ եմ կանչել, հեսա կգա ու կարանք սկսենք ինտերվյուն, որ հետո էլ եթեր տաք հա՞:

Մինչև կհասցնեի ասել, որ ինտերվյու չեմ անելու ու եթեր չի լինելու, Դոնարան տան դուռն արդեն բացել ու «համեցեք»-ն ասել էր: Մեզ էլ դիմավորեց տան ամենափոքրիկ անդամը՝ Դոնարայի թոռնիկը, ում դեմքը զարմանքի ու ուրախության նոտաներ էր պարունակում:

Դոնարայի հարսը արդեն սուրճը դրել էր գազին: Իսկ մինչ պատրաստվելը՝ ես և Ելենան որոշեցինք պատմել մեր մասին և բացատրել հետազոտությանս էությունը և նպատակը ու ամենակարևորը՝ այն, որ մենք եթերի հետ կապ չունենք ու որ լրագրողներ չենք:

-Ձեր անունը ի՞նչ է, - նայելով Դոնարայի հարսին հարցրեցի:
-Սաթիկ:
-Սաթիկ ջան, դո՞ւք էլ եք ամեն օր մասնակցում հարևանության սրճելուն:Մասնակցում եմ:
-Մասնակցում ա, բայց էդքան չէ: Դե էրեխայա պահում հիմնականում: Չի հասցնում,- առաջ ընկնելով պատասխանեց Դոնարան:
-Երկու երեխա ունե՞ք,- նայելով Սաթիկին հարցրեցի:
-Երեք, - պատասխանեց Դոնարան: Մի հատ 17 տարեկան տղա, էս աղջիկն ա, - ցույց տալով միջնեկ թոռանը, - էս աղջկանից հետո Աստված մեզ կամեցավ ու պարգևեց իմ տղուն, մեռնեմ ջանին:
-Իսկ օրվա մեջ քանի՞ անգամ եք հանդիպում սրճելու:
-Առավոտից առավոտ ենք խմում, էդ էլ ամեն առավոտ չէ: Գեղի կնիկը պարապ ժամ չունի, բալա ջան, - պատասխանում է Դոնարան:

Այն պահին, երբ զգացի, որ խոսակցությունը սկսեց վերածվել հարցազրույցի, տուն մտավ Դոնարայի հարևանուհին՝ Տիգրանուհին, ու մի պահ բոլորս ցրվեցինք իրար հաջորդող հարցերի շարքից: Դոնարան էլ հերթով-կարգով բացատրեց հարևանուհուն հետազոտությանս գաղափարը:

-Էրթանք Զվարթին էլ տենանք: Նորից ա ընկել կաֆելին թևը բան ա եղել,- Դոնարան սկսեց խոսակցությունը, երբ ես ասացի, որ ձևացնեն իբրև ես էնտեղ չեմ:

–Լավ տատիկ ա: 95 տարեկան ա, գիտես չէ՞, դեպի ինձ դառնալով ասաց հարևանուհին,– փառք Աստծո, մենք վատ հարևան չունինք:

–Թիֆլիսում ամուսնացավ, բայց եկավ հետ իրա տունը շենացնելու: Թիֆլիսից էկավ՝ տուն, անասուն ամեն ինչ էլ ստեղծեց: Էն մեր Կարինեն էլ է՛, որ ավելուկ հյուսելուց տեսաք հետս, իրար հետ է՛լ փակոց ենք արել, է՛լ թխել ենք, է՛լ իրար տանը մնացել ենք: Այ տենց հարևաններ ենք եղել, որ հիմի լսում են՝ զարմանում են,– հավելեց Դոնարան:

Հարևանային շփման այս ձևը այցելածս բոլոր համայնքներում գրեթե նույնն էր: Օգնության հասնող, պատրաստակամ, իրար քաջալերող լինելու հատկանիշները առաջնային են «լավ հարևան» կոչմանը շնորհվելու համար:

Գյուղի կյանքից խոսելիս անհնար է չանդրադառնալ աշխատանքին, քանի որ միակ պայմանը մինիմալ կարիքները հոգալու՝ ֆիզիկական բարդ աշխատանք անելն է: Դոնարայենց տանը աշխատում են բոլորը՝ կապ չունի մեծ թե փոքր:

–Ամեն մեկս էլ պտի աշխատենք: 65 տարեկան կնիկ եմ ամեն օր էլ աշխատում եմ: Աշխատես՝ շատ լավ էլ կապրես: Աշխատող խոփը չի ժանգոտի, – վստահ է Դոնարան:

Գյուղում աշխատում են հիմնականում կանայք: Տղամարդկանց մի մասը կամ արտերկրում է, կամ էլ պատերազմի արդյունքում վնասածքներ ստանալը նրանց թույլ չի տալիս կյանքի առօրյա ռիթմով ապրել:

–Մենք (կանայք) շատ ենք աշխատում, շատ էլ խոսում: Լույսը բացվում ա, ու սկսում ենք պլանավորել: Դե պիտի ամեն մեկի տանն էլ հանձնարարող լինի: Թե չէ առանց դրա տուն չես պահի գյուղում: Իմ ամուսինը 65 տարեկան մարդ ա, ինձ լավ լսում ա: Ես շատ գոհ եմ: Հլը մի հատ բերանս չեմ բացել ինքը արդեն անում ա: Մենք իրար շատ լավ հասկանում ենք, համերաշխ ապրում ենք: Ես բծախնդիր եմ. ամեն ինչ պիտի տեղը տեղին լինի:

Գյուղի ոչ շատ բերրի հողը չի խանգարում Դոնարայենց ամեն ինչ էլ ունենան:
Ինչը չի աճում՝ գարու հետ փոխանակման արդյունքում ձեռք են բերում:

–Ամեն ինչ էլ անում ենք: Մեր համար էլ ենք անում, ուրիշի համար էլ ենք անում...Սաթիկ գնա պանիր ու ռեժան բեր մեր աղջիկները փորձեն,– նախադասության կեսից հիշեց Դոնարան:

–Ռոպեներ անց իմ ու ելենայի դիմաց հայտնվեց լավաշ, ռեժան և թել պանիր:

–Կերեք, կերեք, ձեր քաղաքում սենց լավ կաթնամթերք չեք գտնի: Քանի կա՝ ինչքան ուզում եք կերեք... Սաթիկ բեր ավելացրու, քիչ ես դրել,– ասաց Դոնարան:

Կաթնամթերքը այնքան համեղ էր, որ ես ու ելենան ոչ միայն ամբողջ ափսեն դատարկեցինք, այլ նաև հիմա ամեն անգամ

Ծիլքարի մոտով անցնելիս կանգնում ենք Դոնարայից պանիր վերցնելու:

Այս սուրճի սեղանը գործից մի պահ կտրվելու ու հանգստանալու տարածք էր: Սա մի տեղ էր, որտեղ ես և ելենան զգացինք ինչպես տանը: Սա մի տեղ էր, որտեղ կանայք խոսեցին իրենց դժվար բայց միաժամանակ երջանիկ կյանքի մասին: Մի տեղ էր, որտեղ լսվում էր երեխայի ուրախ ձիչ, ինչը ինձ շարունակաբար հետ էր տանում Վանաձորում տատիկենցս թաղամաս ու Չարբախում մեր շենքի դիմացի տաղավար, որտեղ երեխաները ոչ միայն ներկա էին, այլ նրանք էին խոսակցությունների հիմնական թեման և հերոսները:

Վերջաբան

Այս պատմությունները գրելիս մտովի տեղափոխվել եմ բոլոր սուրճի սեղաններ, արդարացնելու համար համոզմունքս, որ չնայած համայնքների բազմազանությանը՝ բոլոր սեղաններն ունեն մեկ կարևոր նմանություն. դա տարածքների ամոքիչ ուժն էր: Սրանք տարածքներ էին, որոնք կանանց թույլ էին տալիս խոսել այն թեմաներից, որոնց մասին չէին խոսի այլ միջավայրերում:
Այս համայնքներ մուտք գործելը ստիպել է ինձ նկատել երևույթներ, որոնք անցնում են սրճելու պրակտիկայի սահմաններից դուրս: Ինձ համար կարևոր էր չխոչընդոտել սուրճխմության սահմաններում կառուցվող դինամիկային, ինչը բարեբախտաբար կամ դժբախտաբար ոչ միշտ էր հաջողվում: Բայց դա չէր խանգարում նրան, որ ես նույնպես դառնամ այս սեղաններում տարվող խոսակցությունների լիարժեք մասնակից: Եվ դրա համար շնորհակալ եմ բոլոր կանանց, ովքեր չհրաժարվեցին հյուրընկալել ինձ իրենց «մասնավոր» ապահով տարածքներ:

Սույն հետազոտությունն իրականացվել է Հայաստանում կանանց հիմնադրամի (ՀԿՀ) ֆինանսական աջակցությամբ: Դրանում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակին և կարող են չհամընկնել ՀԿՀ-ի և տեսակետներին:

WOMEN'S FUND ARMENIA